

թիւն մը այնքան լիակատար որքան ինամեալ : Կանուխէն սորված էր ֆրանսերէն ու ֆրանսական գրականութեան գեղեցիկութեանց ծանօթացած էր :

ԱՆԼԵՏ-ՎԷՖԻՔ-ՓԱՆԱ. — Այն պէջի գործը շարունակելով, Անմէտ-Վէֆիք-Փաշա, այն ատեն Մեծ-Եպարքոս, հրատարակեց նոր թարգմանութիւն մը Մոլիերի մաքող գործերուն (1) : Եթէ այդ բոլոր կատակերգութիւնները զեռ չին ներկայացուած Տանկաստանի մէջ, անոնց թարգմանութիւնը կը պարունակէ առաջնակարգ յատկութիւններ, որոնց առաջինն է ֆրանսացի մեծ կատակերգական հանձարին կատարեալ ըմբռնողութիւն մը :

Դեռ ցոյց կուտան Վոսփորի վրայ, այն անսաման աշտարակներուն մօտ զոր Մեհէմէտ Բ. կառոյց՝ Պոլսոյ առման նախորդ տարին, փոքրիկ սպիտակ տուն մը որ վարդերու եւ յասմէկներու փունջի մը մէջէն կը բարձրանայ : Այդ այն բոնախն է ուր, հեռու ամէն ազմուկէ եւ բոլոր գլուխ ցաւցնողներէն, օսմանեան նախարարապետը կը քաշուէր Մոլիեր թարգմանելու համար ու նախարարական պզտիկ կատակերգութիւններուն տաղաւորը կը մոռնար մարդկային սրտին յաւիտենական կատակերգութիւնն ուսումնասիրելով :

(Շարունակելի)

ԱՏՈՒՅԹ ԹԱՒԱՍՈ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԵԿՈՅԹ ՄԸ Ի ՓԱՐԶ

Խումբ մը փարիզաբնակ Հայեր վերջերս շատ գեղեցիկ նախաձեռնութիւնն ունեցած են «Փարիզի Հայ աշխատանքային Միութիւն» մը հիմնել, փարիզի մէջ ջրուած հայ աշխատանքները քով քովի բերելու, անոնց մէջ իրերօգնութեան ոգին զարգացնելու, ազգային զգացումը վառ պահելու նպատակով : Այդ Միութիւնը որոշած է հրապարակային բանաստեղծութեանց շարք մը սարքել : Ասոնց առաջինը տեղի ունեցաւ հոկտեմբեր 8ի իրիկունը, « Իւնիոն Վրեթիէն » թ

սրահին մէջ : Պ. Զօպանեան խօսեցաւ Մկրտիչ Պէշիկթաշլեանի հանրային ու գրական գործունէութեան մասին, մասնաւորապէս ծանրանալով այն գերին վրայ զոր « Եղբայր եմք մեզ » թերթիւը հաստատած է իբր հաշտարար՝ Հայոց կրօնական պատակտուններուն մէջ : Պ. Մամբրէ Մատենճեան արտասանեց Մ. Պէշիկթաշլեանի « Թաղումն քաղաքային »-ը եւ « Առ Զեփիւռն Ալէմտաղիի »-ն : Պ. Շահ-Մուրատեանց երգեց « Դու զով խնդրես »-ը : Ներկայ էին հարիւր երեսունի չափ ազգայիններ :

Օտար Էջեր

ԵՌԹԸ ՔՆԱՅՈՂՆԵՐՈՒՆ ԵՐԿՐՈՐԴ ԿԵԱՆՔԸ

Եփեսոսիցի եօթը քրիստոնեաներ էին որ կը կոչուէին Մաքսիմիանոս, Մաղքոս, Մարկիանոս, Դիոնեարոս, Յովհաննէս, Սրապիոն եւ Կոստանդին : Դեկիոս կայսեր օրով՝ ողջ ողջ պատը հիւսուած, Կելիոն լերան մէկ քարայրին մէջ, հոն ընացած էին Տիրոջը կամօրով :

Արդ, Թէոդոսի թագաւորութեան երեսուններորդ տարին, որմնագիրներ, քարերու պէտք ունենալով, քարայրը բացեր էին, եւ Եօթը Կնացողները արթնցեր էին՝ կարծելով թէ մէկ գիշեր մը միայն ընացած էին։ Բայց իրենց թմացոյցին թէ երկու հարիւր տարի ընացեր էին եւ թէ, իրենց թուն եղած միջոցին, քրիստոնէական կրօնը ամբողջ պետութեան մէջ շատուածներուն պաշտամունքին տեղը բռնած էր :

Թափօր մը եկաւ իրենց որդին մէջէն առնել Եօթը Կնացողներն ու տանիլ Նիկեսոս : Երկու դար ընալած ըլլալով, հանգչած գոյն մը ունէին եւ վարդի պէս թարմ դէմք : Եւ իրենց միաբը երեսուսարդութեան ծաղիկն անեղծ էր պահած :

Մինչ կ'իջնէին լերան կածաններէն, կը ջանային երեւակայել ինչ որ թիչ յետոյ պիտի տեսնէին :

(1) Դիսեղի է որ մեծ Հայերս Մոլիերի կատակերգութիւններուն հազիւ երեք չորս հատին թարգմանութիւնն ունիմ հրատարակուած :